07.12.23 - 08.12.23
10:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Ս.թ. դեկտեմբերի 7-ին՝ ժամը 10:30-ին, և դեկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում տեղի կունենա «Համացանցը և քրեակատարողական հիմնարկները» խորագրով կլոր սեղան-քննարկում:

Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) աջակցությամբ կազմակերպվող այս միջոցառումը միտված է բացահայտելու դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացում համացանցի արդյունավետ կիրառության հնարավորությունները:

Միջոցառմանը, որին մասնակցելու են ՀՀ քրեակատարողական տարբեր հիմնարկների համապատասխան բաժինների աշխատակիցներ, այդ թվում՝ ՀՀ ա րդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ, որպես բանախոսներ հանդես կգան ոլորտի գերմանացի և վրացի մասնագետներ, ինչպես նաև պրակտիկ աշխատողներ՝ առցանց ձևաչափով:

Փորձի փոխանակումը և ոլորտային զարգացման նոր միտումները կնպաստեն ՀՀ քրեակատարողական համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետության բարձրացմանը և ակադեմիական ոլորտում թեմաների նկատմամբ հետաքրքրության աճին:

Միջոցառման ծրագրին հնարավոր է ծանոթանալ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am